ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noyemberyanhamaynq@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"28" հունիսի 2012 թվականի N 113- Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 4,5 կետերով, Հայաստանի Հանրապետության "Տեղական Ինքնակառավարման Մասին" օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով եւ համայնքի ավագանու 29.10.2009 թ. նիստի որոշումով, հիմք ընդունելով Նոյեմբերյան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ *որոշում եմ.*

1. 110-029-01 ծածկագրով տարածքում առանձնացված 5.3 քմ հողամասին տալ հասցե և գրանցել Նոյեմբերյան քաղաքի Բարեկամության փողոց թիվ 16/3 հասցեում:

2. Նոյեմբերյան քաղաքի 110-029-01 ծածկագրով տարածքում առանձնացված 5.3 քմ հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից փոխել և դարձնել հասարակական կառուցապատման:

3. Հանձնարարել Նոյեմբերյան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մեխակ Ամիրաղյանին ներկայացնել հողամասի գործառնական նշանակությունը փոխելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ